

Եւ վրէմինդիր անօրինաց :
 Օսպրանս և զինչ թէ կորուսեր,
 Վան այսորիկ սուգ մի առներ,
 Ացես զաւգ յորժամ դահեր,
 Ուրսխայիր երբ կորուսեր * .

Ո՞ զքեղ վարկեր երկարակեաց ,
 Ունել զաւուրս բազում կենաց .
 Օի մահ երթայ զէետ շաւզաց ,
 Ուրիշ մարմինքն ըստուերաց ,
 Խնկովք Ած քեղ քաղցրասցի ,
 Թողցես զորթն զի աճեացի .
 Եւ մի խարիք՝ ոչ կակասցի ,
 Յորժամ արիւն հեղեալ լցի :

Տուր զտեզի չար առնողին ,
 Բատ պատահման քեղ յաղթողին .
 Քանդի նոքա որք լինասին ,
 Բաղմիցս անդամ օգտեալ լինին :

Թէ եղեր նման մեղուցելոց ,
 Օքեղ կարի ես խրատելոց ,
 Օի կ բումիլն վիրաց քոց ,
 Յաւն է յաւէտ բու գեղ ցաւոց :

Ո՞ գներ զամօթ բարեկամաց ,
 Օկնի բազմաց ժամանակաց ,
 Թէ զառաջն վարքն է փախած ,
 Այլ միշտ նոցին շորհքն է մնացած :

Դանա լինիլ դու կարեւոր ,
 Ունիլ զանուն օրինաւոր .
 Եր ըստ կարեացդ երաշխաւոր ,
 Բայց թէ իցես պատշաճաւոր :

Տարտկուսեալ յամեն ժամու ,
 Ո՞ լինիցիս յամեն սրահու .
 Օի տարսեկցս երկըստ մարդկան ,
 Եմերձակայ ըստուեր մահուան :

Թէ քեղ ծառայք են ՚ի վարձու ,
 Եւ աղախնացք ՚ի սպասու .
 Օմարդիկ լինիլն մի մուտանար ,
 Ուրբ հնազանդին ծառայտար :

Երբ ժամ դիսող ՚ի ձեռս արկեր ,
 Ո՞ ծուլութեամբ անցուցաներ .
 Օի թէ զայնու զանց արարեր ,
 Պարտաւորիս զայն որսնել :

Խնդ մահն այլց չ խնդալի ,
 Յանկարծակի թէ հասանի .

Օի վերջն է միշտ երանելի ,
 Ուրում չէ կեանք նախասակի :
 Եթէ ունիս զիմն բարի ,
 Օինց բարիս , զանսւն բարի .
 Ոի հետեւիր բարեկամի ,
 Որ է բազմիցս քեղ թշնամի :
 Ինդ գրելն իմ մի զարմանար ,
 Օսամանուորս յայտնաբարբառ .
 Օայս համառօտ բան խրատու ,
 Ինդ ողջունիս ընկալ և դու :

* * *

ԴՊՐԱՑՈՒԱՆ ԱՄԴԻՒՆԻՑ

“Ամանեն մոլին և անուզգելի
 չորս այն է՝ որ իւր ըրած չարեցը
 հրապարակ և լուլն վերջն աւ կը
 յամանի :”

Խորանալի ճշմարտութիւն մ’ է
 թէ ամարգ և կատարելագործելի էու սա-
 կայն մարդը անզգոյ իր մի չ , սրուն
 թերութիւնները ճարտար արուես-
 տաւորը նկատած առեն ուղղել . այլ
 մարդը մուաց և կամաց տէր ըլլալով
 իւր թերութիւններն ուղղելու գոր-
 ծիցը գլխաւորապէս ինքն է , (խօսքեր-
 նիս մանուկներու համար չ) վասն
 զի պակասաւոր մարդը նախ իւր կող-
 մէն իւր պակասութիւնց վիաց գի-
 տութիւն ունենալ պէտք է կամ ան-
 ձամիք եւ կամ միջնորդաւ , երբ այս
 գիտութիւնը կ’ունենայ , հետեւարար
 ուղղուելու կամք և չափ ալ կ’ուղիք .
 Երբ այս երեք միջոցը կը գտնուի ի մէ-
 կուն քով այնուհետեւ իւր թերու-
 թիւններն ուղղող ճարտար արուես-
 տաւորներ չեն պակսիր . բաց երբ
 մէկը իւր մարդկութեան անվայել
 պակասութիւնները չուղեր ճանշալ ,
 այնպիսուցին համար ոչ վարպետ կայ և
 ոչ իմաստուն : Այս խորհրդանութիւ-
 նուդ հանուր մարդկութեան մէջն իրը ”

հանգը երկու գլխաւոր հանգամանաց
տէր մարդիկ որոշել, աղջուական և իրավու :
Վրացնան վրայ խօսիլ չեմ ուղեր, քան
զի մէկն ըսելով միւսը կարողենք իմաւ
նալ . Երկրորդին վրայ կ'ուղեմ խօսիլ .
վասն զի նորա ընթացքը խիստ գրա-
ւած է ու շաղրութիւնս և զարմանքս ,
վասն զի ներհակ է այն մարդկային
կոչման և հակառակ մարդկային իրա-
ւաց և պարուոց սկզբանց : Ինթայցք
մը , որ ճարակուած է շատերու որոտն
մէջ , այն է չէ թէ միայն գործոց ա-
պօրինաւորութիւնը բաւական մտա-
ծողութեամբ չի ճանչնար , չէ թէ մի-
այն մասնաւորի ձեռօք խրատուելն
վերջուալ տակաւին անարժան միջոցնե-
րով ստութեամբ և խաբէութեամբ
արդարանուալ կը ճգնի , այլ որ մեծն է
եւ չարագցն , իւր չարիքը հրապա-
րակ ելլալէն զինի վերատին կը յամա-
ռի . ինչ անուղղելի բրտութիւն . պա-
կասութիւն որ մարդ գաղանաց կը
հաւասարեցնէ և կամովին չար ըլլալ
ուղել կը նշանակէ . ո՞ւ չափ հեռոի
մարդկային վարուց եւ բարուց ուղ-
ղութեան համար յայտնուած և սահ-
մանուած սկզբունքներէն եւ հրա-
հանգներէն որք կարող են մարդս աղ-
նուացնել և կատարելագործել : Այս-
պիսի ընթացք մը ոչ միայն ընդդէմ
է մարդկային կոչման , այլ և հակառակ
միանգամայն աստուածային կամաց ,
Ո՞հ , ինչ մոլութիւն և ինչ չարիք , ո՞ր
աստիճան վայրենութիւն և անդգա-
մութիւն . արարած մը իւր Վրացին
կամացը գէմ կը գործէ . ոճիր մեծ և
անծողիլ . ինչպէս : - Վիտենք որ՝
եթէ մէկը մեղի դէմյանցանք մը գոր-
ծէ , և իւր յանցանքը ճանչնալով նե-
րումն խնդրէ , թէ և սաստիկ վլէժ-
ինդրութեամբ գրգռուած ըլլանք ,
կը տեսնանք որ սրուերնիս կ'ամսի և
տակաւ առ տակաւ կը զիջանինք (խօս-
քերնիս գաղանամիաներու համար չէ) .

իսկ երբ յանցաւորը յամառի , ըրածը
կամ ուրանաց եւ կամ սուտ ու չնչն
պատճառներով արդարացնել ճգնի ,
այն ատեն մեր զայրոյթը կ'աւելնաց
և անհաշտ ատելութիւնը օգնութե-
կը համենի վլէժինդրութիւնը յագե-
ցնելու համեր : Ո՞եք տկարար արած-
քը մէզ եղած անարդանաց և զիկա-
նաց փոխարինել կ'ուղենք երբ դիմա-
ցիննիս յամսուեալ կը տեսնենք . մի
թէ Վրարիշը պիտի տակաց , սակայն նո-
րա համբերութիւնն ու մարդասիրու-
թիւնը աւելի է , կը համբերէ բայց
առանց փոխարինի չժողովուր : Դար-
ձեալ շատ մարդիկ կուրօրէն տգիւ
տութեան անողոքելի ճիրաններուն
մատնուած և ի կրկց յաղթեալ իրենք
զիրենք գիտնոց եւ իմաստնոց կարգը
դասած իրենց մասց մէջէն անցած ա-
ման բան , ինչ և իցէ խորհուրդ առ-
անց վնասակար ըլլալը նկատելու թէ
հրապարակաւ եւ թէ առանձնակի կ'
ուղենք ընդհանրացնել , իրեւ ուղիղ
հաստատելով , և երբ իւրեանց հրա-
պարակ հանածն հրապարակաւ եւս
ջրուի , աւելի ստրկութեամբ կը լրբա-
նան , կը յանդգնին և կը յամառին ,
որովհետեւ տգիտութեան խմորովը
շաղախուած են , և փոխանակ աւելի
մեծ շնորհակալութեամբ հրապարա-
կական ձայներուն լսելու , որ աղ-
նուական սրտի գործ է , ընդ հակա-
ռակին կուրօրէն կը գիմեն խարէու-
թեանց և ուրիշ անարժան միջոցնե-
րու , որոնք չարամիտ և նենդաւոր ան-
ձանց գործն է և մարդուս վլէժմու-
թիւնը կը ասրիացնէ . վասն զի այլ և
այլ թիււր նախադասութիւններով
թիւր ձեռնարկութիւններ եւ փաս-
տեր հնարելու կը ճգնին , որովուղղա-
խոհ աղնուականին տուջեւ իրենց վար-
կը կը կորանցունեն , և կասկածելի կը-
նեն զիրենք տեսնող աչքերու *

Ո՞երի ըսածնիս աւելի օրինաւոր

կերպիւ հաստատելու համար, օրինակներու կը կարօտիմք, ուստի փոքր ինչ սլանանք երեւակայութեամբք դէպի անցեալ գարերը, և նկատենք թէ բնչ կը հնչէ մեր ականջներուն անոնց նկարագիրը: Յիշենք անդամ՝ մը յապի կուրեանց և Ասոյիկեանց աղանդներու համար ելած վէճերը, որոնք հրապարակաւ հերբուելին վերջը կ'ուզեին իրենց թիւր կամքը յառաջ տանել, որոց դէմ արիաբար վիճեց սուրբն Պօղոս Աթէնքի մէջ, եւ ճմարտութեածայնուլ շատ մը ըմբոստացած մըտքերը խոնարհեցուց: Այսպէս կը բարբառէր սուրբն Պօղոս աղանդաւորաց դէմ ատենի մէջ կեցած: « Օ յօ դուքն յանձանութս պաշտէք, ես զնոյն պատմեմ ձեղ նա երկնից և երկիի է տէր. ոչ ՚ի ձեռագործ տաճարս քնակի և ոչ ՚ի ձեռաց մարդկան պաշտի իբրեւ կարօտ ումէք, նա տայ ամենայնի կեանս և շունչ և զամենայն ինչ: Պործ · ձիւ · 17 ·

Յիշենք նա եւ Արփոս չարափառի և իրեն հետեւողներու աղանդն, որ կ'ուզէր ընդհանրացնելիւր թիւր կարծիքը ամենուն սրտին մէջ, որոյ աղանդն այսպէս կը համառօտէ արժանահաւատն խորենացի: « Ուսոց չարաչար ամզարշտել. ոչ ՚ող զբդի հաւասար հօր և յէութենէ, և ոչ ծնեալ ՚ի հօրէ՝ յառաջքան դժաւիտեանս, այլ օտար զոմն եւ արարած և կրտսեր եւ յէտ ժամանակի գոյացեալ: » Խորեն. Պր. Բ. 86: Ահա այսպիսի ամբարշտութեանը համար ՚ի վերջոյ չարաչար սաստակեցաւ, և իրեն նոյն հերձուածոց և հերփոտիկոտութեց դէմ Նիկոյ հոգեգումար սուրբ Ժողովը դումարուեցաւ, որ անոնց դէմ մաքառելով փրկեցին եկեղեցին եւ պաշտպանեցին ճշմարիտ կրօնքը: Եւ իւր աղանդոյն հակառակ հաւատոյ հանդանակն եւս աւելցաւ, որ կ'եր-

գուի մինչեւ ցայսօր Հայաստանեայց բոլոր սուրբ եկեղեցիներուն մէջ, Ուրիշներն ալ յիշենք սրբեաք, որոնց ոչ թերթ կը բաւականանայ և ոչ գըրիւ, աւելի յարմար կ'ըլլայ նաևս եթե ներկայ եղածներէս օրինակ մ'ալ բերենք գարձեալ մեր խօսքերուն հաստատութեանը համար: Ըստ մի օրինակներուն մէջ բաւական է մինակ Հռոմեայ Ա. Պատի արարքները նկատել ըջմատութեամբ, որ դարսուս մէջ աւելի աչքի զարնող խնդիր մի է. ուր պիտի տեսնենք յատկապէս կամք մի որ կ'ուզէ աստուածային անսխաղուկանութիւնն սուրբ կամ թէ սանկ ըսենք, « Մարդ եւ անսխաղութիւն: » Այս անլուծանելի հակասութիւն մի է, զոր ընդունելու և համոզելու համար բաւական կուրացած միտք պէտք է. ես իմ տկարութեամբս պիտի համարձակիմ ըսել՝ որ այս բանիս համոզուողը ըանականի միայն կերպարանը կը կրէ : Ահա այս նորանշան մարդն իւր բոլոր համոզութերովը հրապարակացին ժողովներով և թերթերով անշափառ խայտառակուելէն զինի, վերըստին կ'ուզէ իւր այն անփրաւ կամքը յառաջ տանել և նղովքներով ու բանադրանքներով խոզք ժողովուրդն աշաբեկելքայց Աստուած՝ Ճշմարտութեան Աստուած ըլլալով, այդ սուտը հաստատելու համար եղած նղովքը չափսոի ընդունի, սակայն կարծեմ թէ Արբազան Պատին ալ մինչեւ որ իւր հըպարտացած գլուխը քարի մը ըստ զարնէ՝ պիտի չմժափի, և պիտի չիմանայ թէ ինքզինքը նոյն իսկ անսխալ հըպատարակելու կէտին մեծապէս կը սիրակի: Այս տեսակ բան մը խմաստասիրելու համար եթէ աստուածաբա-

նութեան կարօտութիւնն կայ, թող իրեն ալ ծանօթ եղող աստուածաբաւ նութեան մէկ կէտը յիշէ, այսինքն յամառեալ հրեշտակաց մշտնջենաւոր դատապարտութիւնը, բայց կարծեմթէ անսխալութեան ծայրը հասած ըլլալուն համար երբէք չէ յիշած երկնային հրեշտակաց յերկնից ՚ի խորս գժոխոց թօթափին, որոց նպատակն ինչ էր, եթէ ոչ շոտմայ սրբազնն հարի նման Վատուծոյ փառքը իրենց օեփականել, ուրեմն թող սրբախան այն հրեշտակները, որ իրենց արքանեակ մի ևս դատան երկրիս վրայ, որուն շատերը կ'աշակերտին, տղիտութէ հզօր կարծուած՝ բայց դիւրընկելի բաղկաց տակն ապատանած։ Վայ մասին երկար ճառելու հարկ վրայ, ըստ որում արգէն ամէն բերան առ հասարակ նոյնը կը պախարակեն իւր սկզբունքներավը մէկ տեղ, այլ սակայն նորա հոգը չէ, այսպէս են բոլոր յամառեալ մոլիները, ամենափեքը տըզայէ մը սկսելով՝ մինչեւ ամենամեծ վեհապետ մը երբ յամառի իւր չարեաց վրայ, անուղղելի է նա, և զգուշնալի չար մը կրնայ համարու իլ։

Քաւականի է այս օրինակները, որոց մէ կարծեմ պէտք եղածին չափ տեղեկացանք որ այսպիսի նպատակի դիմող անձաց վախճանը խիստ տաժանելի նեղութիւնն է, և բովանդակ կեանկերնին նախատինք և անպատուութիւնն է։ Ա ամս որոյ կը զգուշացնեմ եւ իմ արենակից եղբայրներս՝ որ ջանան միշտ տգիտութեան մէկ բիծն անդամ իրենց շմօտեցնեն, քանզի առ հասարակ ամեն ազգաց թշնամի տգիտութիւնն է, որուն և յաղթելն ամենամեծ քաջութիւնն մի է։

Դիմաւոր դիտութիւնը անձին չափը ճանմաղն է, « տգէտ ըլլալը գիտնակն ալ մեծ դիտութիւնն մի է . »

ըստ իմաստասէր մը ջաւալի է արդարեւ տեսնել մարդկային ազգի մէջ այսպիսի անձեր՝ որք դժբաղդաբար մարդ անունով կը չըլին. սոսկալի չարեր են անոնք, ու ուղեն ըլլան. դպրոցական համբակիէ մը սկսեալ, յետին աստիճան ժողովրդականէ մը, իշխանաւորէ մը, մինչեւ ամենէն մեծ վեհապետն ըլլայ, մարդկային ազգի ժանտախտներն են : « Բանզի ինչպէս ամէն մոլութիւնն, նոյնպէս և առաւելեւս այս մոլութիւնը տարափոխիկէ, վասն զի կամապաշտութիւնը շուտ կրնայ շփոթիլ անձնասիրութեն և վեհանձնութեան հետ, այլ սակայն ասոնց պայմանները խիստ տարբեր են անոր պայմաններէն, սակայն տգիտութիւնը կամապաշտութեան հետ ըստորդուած՝ չը թողուր այդ խնդիրը նկատել, հետեւապէս և չեն կարող ճշմարիտ վեհանձն վարդիկ ըլլալ։ Կրնայ մէկը առարկել մեզ թէ՝ աչքի դարնող այդ մոլիներուն շատերը գիտնական անձեր են, ինչպէս տգիտութիւնը պատճառ կուտանք այդ չարեաց։ — Ալ պատասխաննենք. այս, աստիճ ըստ մեծի մասին շատ հմտու և շատ դիտնական մարդիկ են, բայց դժբաղդաբար մէկ կարեւոր դիտութիւնն մը կայ զոր չեն դիտեր՝ որ իրենք մարդ եւ հունաւոր մաքի տէր են, չեն դիտեր որ իրենք տկար բնաւթելիքակաւած միշտ ամէն պարագայի մէջ ուրիշի մը կարօտ են. վերջապէս չեն դիտեր թէ որչափ դիտնան՝ դարձեալ տգէտ են. ահա այս գիտութիւնն է որ կը մղէ զիրենք դէպ ՚ի չարը, որով կ'ըլլան արհամարհող նմանեաց, հետեւաբար եւ անուղղելի, որոցմէ իրաւապէս սոսկալու է իբրեւ վնասակար հրէշէ մը։

Ըստ Արք Յարութիւնի
Հայութանց Ուալսացի
Հայութանց Ուալսացի